ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2025թ. N _____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 255-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու, «Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 255-Ա՝ «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել է՝ միացնելով «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

Երևանի քաղաքապետի 21.03.2025թ. հ.1974-Ա, 1976-Ա և 19.05.2025թ. հ.1920-Ա որոշումներով հաստատվել են նշված փակ բաժնետիրական ընկերությունների միացման պայմանագրիրը, հաշվապահական հաշվեկշիռները, տեղաբաշխված բաժնետոմսերի շուկայական արժեքները, այդ ընկերությունների վերակազմակերպման կարգը, վերջիններիս կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի փոխարկման կարգը, միավորվող փակ բաժնետիրական ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների միացվող ընկերությանը փոխանցման ակտը, կանոնադրական կապիտալի չափը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել հաստատել Երևանի ենթակայության «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ վերակազմակերպման գործընթացը ավարտելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Կազմված է 19.05.2025 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ **25.01.2002 թ.**
գրանցման համար՝ **222.120.00027**
հարկ վճարողի հաշվառման համար՝
01806173
21.05.2010 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____.____ փոփոխությունը
գրանցված է իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
“_____”_____ 2025 թ.

Աշխատակից՝

_____ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևանի քաղաքի ավագանու
_____._____ 2025 թ.
թիվ _____ որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

փակ բաժնետիրական ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1. Կանոնադրության 1.2. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությունով.

«Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «ԹԻՎ 19 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու, «ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 255-Ա որոշման համաձայն Ընկերությունը վերակազմակերպվել է՝ ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը նրան միացման ճանապարհով: Ընկերությունը հանդիսանում է ԵՐԵՎԱՆԻ «ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ» ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության (նախկին անվանումը՝ «ԹԻՎ 9 ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» փակ բաժնետիրական ընկերություն, գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 19.02.1996 թ., գրանցման համարը՝ 290.140.01184, հարկ վճարողի հաշվառման համար՝ 01805215) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:»:

2. Կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **8,160,000** (ութ միլիոն հարյուր վաթսուն հազար) դրամ, որը կազմում է 816 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 դրամ:

Բոլոր 816 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին և լրիվ վճարված են նրա կողմից:»: